

Պ Ա Տ Կ Ե Ր

I

Դեռ մութ գիշեր, երկրի վրայ
 Փռած ունէր իւր թևեր,
 Դեռ մարդկային սիրտն անղգայ
 Քնոյ գիրկը կը թմրէր.
 Մեռած ասես ամբողջ բնութիւն,
 Ոչ աղաղակ, ոչ շշուկ.
 Կարծես հատած է մահուան քուն
 Ամենուն էլ ձայն ու շունչ,
 Զի երևում ոչ նուազ լոյս
 Ոչ աստեղաց փայլ ու շող
 Իմ էլ կարծես հանգչում է յոյս
 Արև տեսնել ոսկեշող:

II

Տխուր գիշեր, և արթնութեան
 Ո՛վ ատելի արարած.
 Քո մէջ ճիշտ որ Հայի կենաց
 Պատկերն ունիս նկարած,
 Նրա անշարժ, անշունչ մարմին
 Դրուած կարծես դազադում,
 Նրա անհոգ, թմրած հոգին,
 Որ չէ ուզում արթնութիւն,
 Նրա կեանքը, նրա վիճակ
 Որ ճնշման տակ և տխուր
 Մնում է միշտ փրկող աչքից,
 Յաւէտ անտես և անլուր.

III

Բայց, ան, յանկարծ հաւը խօսեց,
 Տալիս է նա աւետիք
 Թէ լուսոյ ելքն արդէն բացուեց
 Խաւարն արագ կ'ընի չիք,
 Կարծես, կասէր, պէտք է վանել
 Միտք ու ցնորք յուսահատ,
 Խաւարի դէմքն էլ մաքառել
 Յուսալ, դործել անընդհատ,

Ի՞րաւ, աչքս երբ դարձուցի
Դէպ սենեկիս պատուհան
Հեռուն իսկոյն նշմարեցի
Արշալուսոյ ծիածան:

IV

Ո՞հ, ինչ սիրուն պատկեր ունիս,
Աւետաբեր արշալոյս,
Քեզմով իբրու կարթնու հոգիս,
Կը վառուի իմ մարած յոյս:
Թէպէտ մթան մէջ ու հեռուն
Կերեցնես քո պատկեր,
Թէպէտ դուրսը միշտ արեան գոյն
Ծածկած ունի քո լապտեր,
Սակայն ծոցիդ մէջ անկասկած
Արևու գունդ կծած կես,
Ի՛ստաւօտեան ժամպ դարկած
Ջայն մութ երկրին կրաշխես...:

V

Բայց մեր էլ երբ պիտի փայլէ
Աւետաբեր արշալոյս,
Մեր արևը երբ պիտի ելնէ,
Պսակել խեղճ Հայի յոյս:

VI

Այո, քո մէջն էլ կտեսնեմ
Մեր յուսալիւր ապագան,
Այո հայն էլ լոյս կտեսնէ
Միայն թէ լինի միաբան
Հայի խաւարն էլ կցրուի,
Շատ չի տևիր գերութիւն
Գէթ մեր միջէն եթէ վերցուի
Մեր անտարբեր սառնութիւն.
Եթէ գործից յետ չփախչին,
Որոնք ունին ոյժ ու կար,
Եթէ լեզուի հետ վաստակին
Ձեռք ու կորով հաւասար:

1879 20 փետր.

ՄՈՒՐԱՅԱՆ